

Ի հարկէ մենք անտեղեակ չենք մեր թերութիւններին՝ շատ անելի խորն ենք ըմբռնում, թէ որտեղ է չարեաց արմատը. բայց ո՞ւր է դիտարկական այն գաւապանը, որով աշխարհը միանգամից կերպարանափոխ կարելի է անել: Մի ժողովուրդ, որ ամենայն տեսակ լուսանքներ, պրպարտութիւններ առանց յուզուելու կարողալ և մինչև իսկ խրախուսել կարող է. մի ժողովուրդ, որի մէջ մասնույի դրօշակի շուրջը խմբուած շատ անձնատրութիւններ գիտակցաբար ստել, հակառակորդներին անվայել կերպով ցեխոտել կարող են՝ առանց խղճի փոքրիկ խայթ զգալու. մի ժողովուրդ, որ անտարբեր նայել կարող է, թէ ինչպէս նախնեաց թողած սրբական ասանդները իր իսկ տհաս և անհաւատարիմ վաւակների ձեռքով քանդուում են՝ բնական է, որ իր ամենամեծ հաստատութիւնների մէջ ևս մեծ թերութիւններ երևան հանէ:

Մենք չենք ուրանում մեր թերութիւնները. գիտենք, որ մեր առաջնորդութիւններն ու յաջորդութիւնները թափուր են, որ մեր քահանայութիւնը ընդհանուր առմամբ տգէտ է, որ մեր վանքերն իրենց կոչման ծառայել չեն կարողանում, որ մենք կենդանի խօսքի քարոզիչներ չունենք, որ մեր հոգևոր երգեցողութիւնը բարեփոխութեան կարօտ է, որ մենք աղքատների խնամատարութիւն չունինք՝ Աւետարանի և Եկեղեցու պատմութեան ցոյց տուած պահանջների համեմատ, որ մենք քրիստոնէական որբանոցներ, հիւանդանոցներ, անկեղանոցներ չունինք մեր նախնեաց նման: Բայց և այն գիտենք, որ հոգևոր կեանքն էլ իր աճման և վարգազման պայմաններն ունի, որ բարձրագոյ աղաղակներն ու ճոճոացող բառերը ոչ մի ազգի տուն չեն շինել, այլ լուրջ, երկարատև և անձնուէր գործունէութիւն է պէտք:

- Ահա ժամանակը շահեցնելու միջոցը և Փրկչի ցոյց տուած ճանապարհը:

Թող զան ու անցնին տարիները՝ մենք լուռ ու մուռ կրածանուինք նրանցից. բայց երբ նկատենք ցանկալի կրօնական-հոգևոր կեանքի արշալոյսի նշանները, այն ժամանակ միայն կզգանք, որ ժամանակը ի վուր չենք կորցրել և ցնծութեան աղաղակներով կզոչենք. «Շնորհաւոր Նոր տարի»:

ԳԱՐԵԳԻՆ ՎԱՐԴԱՊԵՏ ՅՈՎՍԷՓԵԱՆ



ՀԱՐՅՈՒՐ ՏԱՐԻ ԱՆՅ

ՆՈՐ ՏԱՐԻ, ՀԻՆ ՍԱՐՏԱՏՐԱՎԵՐՆԵՐ

Պատմութեան թեթև քողով շարշվեց 1998-ը: Այլևս անցյալով ենք խոսելու երեկվա նորի մասին և փորձելու ենք իմաստավորել այսօրը՝ 1999-ը. որ ընդամենը մեկ տարի է նոր մնալու, ինչպէս եղել է դարեր ի վեր: Մինչ նոր տարվա անդրագիկ համարի խմբագրական գրելը, մենք

թերթեցինք Մայր Աթոռի երկու պաշտոնական ամսագրերը՝ «Արարատ»-ը և «Էջմիածին»-ը: Զարմանալիորեն տխուր մի զուգադիպություն մը տեսանք, որ հարյուր տարի առաջ «Արարատ»-ի հունվարյան համարում տեղ գտած խմբագրականը կարծեք գրված լինի հենց այսօրվա համար, այսօրվա շնչով: Երկար խորհեցինք այնտեղ արծարծված հրատապ խնդիրների, հուզող հարցերի շուրջ, հասկացանք, որ մեկարյա վաղեմություն ունեցող 1899 թվականի հունվարյան համարի այս խմբագրականը, դժբախտաբար, այսօր նույնքան այժմեական է, նույնքան հրատապ ու սրտամոտ, այսօր ևս չի կորցրել իր արդիական հնչելությունը, որը պայմանավորված է երեք գլխավոր պատճառներով:

Առաջինը արևմտյան աշխարհի իրողությունները մեխանիկորեն հայ իրականություն փոխադրելու ձախող ձգտումն է: 1880- 90 թթ. Եվրոպայում հեղափոխական զաղափարներով տոգորված ուսանողական մոր սերունդը պայքարում էր հասարակական կյանքում Եկեղեցու ունեցած մեծ ազդեցության դեմ, մի պայքար, որն այնքան աղետալի հետևանքներ էր ունենալու որչ Եվրոպայի համար:

Այդ տարիներին այնտեղ սովորող հայ երիտասարդներն իրենց ուսումնակիցների հետևողությամբ նույն պայքարը փոխադրեցին հայկական միջավայր, թեև երկու կայսրությունների միջև քաժանկան իրենց հայրենիքում Եկեղեցին ոչ թե արևմտյան ըմբռնմամբ իշխում էր ազգային-հասարակական կյանքում, այլ, պատմականորեն ձևավորված ավանդույթով և պարտավորությամբ, այդ կյանքն էր կազմակերպում և պաշտպանում տիրող քրեությունների ու հալածանքների պայմաններում:

Ժավոք նկատելի է, որ ոչինչ չի փոխվել թերևս նաև այսօր: Նույն մոտեցումները, ժամանակի ու տարածության հնչով, փոխադրվել են մորոքյա կյանք՝ դառնալով ապրելակերպ, կենցաղ ու էժանագին փառքի ձեռքբերման ուղի:

Երկրորդ գործոնը պետական պաշտոնյայի ու հոգևոր սպասավորի հանդեպ ցուցաբերվող վերաբերմունքի տարբերությունն է, երբ իշխանության ամենաստորին օղակի ներկայացուցչին քննադատելն իսկ կարող էր դիտվել անհնազանդության արտահայտություն՝ պատժվելու մտավայնության մը, իսկ Եկեղեցականներին կարելի էր անպատիժ քննադատել և հասարակական համարձակ ու նվիրված գործչի համբավ ձեռք բերել: Ազգային պետականության կորստյան պայմաններում ձևավորված ամոթալի այս հոգեբանության մասին Հայոց Եկեղեցու պատմության մոր շրջանի ամենապայծառ դեմքերից կարապետ եպս. Տեր-Մկրտչյանը, դարձյալ հարյուր տարի առաջ և վերստին «Արարատ»-ի էջերում, գրում է, թե «այն լեզուն, որ կարկանդակ է և պապանձում գիտի գգրի առաջ, շամթ ու որոտ է թափում Եկեղեցու հովիտների գլխին»:

Մեր օրերում իսկ, ազգային անկախության վերականգնումից հետո, այս նույն հոգեբանությամբ որոշ մտավորականներ ու հասարակական գործիչներ, ովքեր Հայաստանի տնտեսության ու գիտա-մշակութային կյանքի անկման պատճառներն իրենց ամբողջության մեջ քննելու համարձակությունը և ունակությունը երբեք չունեցան, այլ այն քացատ-

րեցին քացառապես արտաքին աննպաստ հանգամանքներով, հաճախ ամենախիստ դատավորի կեցվածք ընդունելով՝ եղած ու չեղած թերություններն են որոնում Եկեղեցու գործունեության մեջ: Տասնամյակների ընթացքում միջազգային ընդհանուր ճանաչում ձեռք բերած մեր գիտամշակութային և ԲՈՒՀ-ական հաստատությունները, Խորհրդային Միության փլուզումից հետո, եթե մի ներքին քայքայման ենթարկվեցին կամ տեղի տվեցին արտասահմանյան նորահաստատ կենտրոնների և ընդհանուր արժեքային համակարգի առջև, ապա Մայր Աթոռը, 1920-30-ական թթ. ծավալված անօրինակ հայաձանցներից և հաջորդող տասնամյակների սահմանափակումներից հետո, երբ կենդանի հասարակական կյանքից բռնությամբ օտարված Եկեղեցուն վերապահվել էր միայն ծիսա-արարողական գործառույթ, այն էլ միայն իր կամարների ներքո, ինչպե՞ս պետք է միանգամից դիմագրավեր տարբեր հարանվանությունների տարբեր կենտրոններում ամենանրբին պատրաստություն անցած քարոզիչներին:

Երրորդ պատճառն ինքնահաստատման ձգտումն է և ինքնահաստատման այդ ճանապարհին՝ հասարակությանն ու ավանդական ազգային-հոգևոր արժեքներին նետված մարտահրավերները: Անցյալ դարավերջին հայկական տարբեր կազմակերպություններ և խմբակցություններ, փորձելով իրենց ազդեցությունը հաստատել հայ կյանքում և մասնավորապես արևելահայ միջավայրում, ուր ազգային գրեթե բոլոր հաստատությունները գտնվում էին Հայոց Եկեղեցու հովանու ներքո, դիմեցին անզուսպ այն հարձակումներին, որոնց մասին «Արարատ»-ի վերը բերված խմբագրականում այնքան ցավով է գրում Գարեգին վարդապետ Հովսեփյանը: Ինքնահաստատման նման ձգտմամբ պայմանավորված այս գործելակերպը դրսևորվեց և մեր օրերում, երբ կրթական, մշակութային, քարեգործական ու մի շարք այլ հարցերով զբաղվող այլազան կազմակերպություններ այն մտավախությամբ, թե հասարակական կյանքից բռնությամբ օտարված Եկեղեցին, իր ներքին ներուժով, Սփյուռքի թեմերից ստացված աջակցությամբ, ինչպես նաև դարերով ձևավորված ազգային ավանդույթով, կարող է վերստին իր ազդեցությունը վերահաստատել այս բնագավառներում, չսպասելով նման հնարավոր որևէ քայլի ձեռնարկմանն իսկ, հիշյալ կազմակերպությունները շարունակ շեշտում են, թե հիմա փոխվել են ժամանակները, և Եկեղեցին այլ խնդիրներ ունի, իսկ այդ գործառույթներն իրենց են վերապահված:

Ինքնահաստատման իրենց ճանապարհին Եկեղեցին վտանգավոր մի արժեք են համարում նաև հեռուստաթերթն ու քեմերը էժանագին ստեղծագործություններով, ձայներիզներով, տեսաերիզներով և լրատվական այլ միջոցներով լցնող կատարողներն ու կազմակերպությունները, քանի որ 1700-ամյա հոգևոր չափանշային արժեքներն անհամատեղելի են մշակութային այս թափոնների հետ: Վերջիններս, այս արժեքներին հարվածելով, պետք է իրենց համար ճանապարհ քացեն, որն այնքան ցայտուն կերպով է արտահայտվում լույս աշխարհ եկող օրապակաս տեսաերիզներում և ձայներիզներում, ինչպես նաև դրանց հեղինակների հրապարակային խոսքում:

Այսպիսով, դժբախտաբար, մեր հասարակական կյանքում հնչող նման քննադատությունները պայմանավորված չեն հոգևոր կյանքից մի նոր շունչ, վերանորոգություն և վերակենդանություն հաղորդելու ձգտմամբ: Այս խնդիրներն արծարծող որևէ ծրագիր հասարակությունը և կամ նրանում գործող ազդեցիկ ուժերը չեն ներկայացնում, որ Եկեղեցին ընդունի կամ չընդունի: Նրանց նպատակը ազգային-հասարակական կյանքում Եկեղեցու վերաներառումը չէ, այլ՝ օտարումը:

Ժամանակը, սակայն, անկասելի իր ընթացքով առաջ է շարժվում՝ հաջորդ տարի ազդարարելու լրումը մարդկության Փրկչի ճնշմամբ սկզբնավորված երկրորդ հազարամյակի՝ հավատելով, թե «*Երկինք ու երկիր կանցնեն, բայց իմ խոսքերը չեն անցնի*» (ՄԱՏԹ. ԻԴ 35): Եվ հաջորդ՝ 2001 թվականը կգա վկայելու, որ Հայոց հիմնավորը աշխարհում, պետականորեն ընդունվելուց հետո էլ, 1700 տարի հնչելով Հայոց Եկեղեցիներից, այս խոսքերը չեն անցել և չեն անցնելու նաև մեր ժողովրդի համար, զի աշխարհասփյուռ հայության քեկորները, ուր էլ ապաստանեցին, բնավ չմոռացան իրենց Հայրենիքն ու Սուրբ Էջմիածինը, ուր մեր հավատո Հայրը՝ Սուրբ Գրիգոր Լուսավորիչը, վառեց ՀՈԳԵՎՈՐ ԼՈՒԹՍԻ ԿԱՆԹԵՂԸ: Իր դարավոր պանդխտության օրերին հայն ուխտեց միշտ հավատարիմ մնալ Սուրբ Էջմիածնին՝ Իսրայելի ժողովրդի պես ասելով. «*Եթե մոռացայց զքեզ Էջմիածին՝ն, մոռացի զիս աջ իմ...*», որովհետև ՀԱԹԸ հավատում է, թե. «*Քանզի ի վերայ Աշոյն եւ Ս. Էջմիածնի ամենայն ազգ Հայոց կապեալ կան*», ըստ վկայության Առաքել վարդապետ Դավրիժեցու, որ այնքան մանրամասնորեն է նկարագրում Շահ Արասի կողմից կազմակերպված հայոց բռնագաղթը դեպի Պարսկաստան:



«Էջմիածին» պաշտոնական ամսագրի խմբագրության կողմից շնորհավորելով մեր ընթերցողներին Մմանորի և Սուրբ Ծննդյան ուրախ առիթով, ասենք, որ Հայոց Եկեղեցու գործունեության շրջագծում, կայուն խորագրերի ներքո, կրոնական և պատմա-բանասիրական ամենաբազմապատյան հրապարակումներով, Մայր Աթոռի պաշտոնաթերթը ևս իր լուսնան կրնձայի ԽԱՂԱՂՈՒԹՅԱՆ ԱՐՔԱՅԻ Ծննդյան 2000 և ՀԱՅՈՅ ԴԱՐԶԻ 1700-ամյա հանդիսությունների զանձանակին՝ մշտապես հիշեցնելով, թե «Յամենայն ժամ աղօթս արարէք, զի մի՛ անկանխցիք ի փորձութիւն» (ՄԱՏԹ. ԻԶ 41), որովհետև աղոթքն է սնում մարդկային տնանկ հոգին և մղում գեղեցիկ նվիրագործության...